

ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐ ՊԱՐՍԿԵՐԷՆ ՎԱԻԵՐԱԳՐԵՐՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԷ ԿՈՍՏԻԿԵԱՆ

kkostikyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Արեւելեան Հայաստանի բնակավայրերն ու շրջանները, ինչպէս նաեւ նրանցում գտնուող հայոց վանքերն ու եկեղեցիները՝ պարսկական աղբիւրներում եւ վաւերագրերում հիմնականում նշում են իրանականացումն ու օտար տարբերակներով, որոնք որոշ դժուարութիւններ են ստեղծում ուսումնասիրողների համար դրանց հայկական անուանումների հետ նոյնացման հարցում, ինչպէս նաեւ առիթ տալիս դրանց հիման վրայ բնակչութեան էթնիկ կազմի հետ կապուած անհիմն շահարկումների: Սոյն յօդուածում կը փորձենք պարզաբանել հայկական բնակավայրերի որոշ օտար անուանումների ծագման պատմական ակունքները, նրանց նշանակութիւնն ու օտար գրականութեան մէջ ամրագրման ուղիները:

Հայկական բնակավայրերի օտարահունչ անունների մի մասը տրուել է ԺԲ. դարից ի վեր նրանց հարեւանութեամբ հաստատուող թիրքական ծագում ունեցող քոչուր ցեղերի ու իշխող վերնախաւի կողմից: Ուստի եւ պարսկերէն փաստաթղթերում նշուող հայկական տեղանունների ու հայոց վանքերի անուանումների փոփոխութիւնները հիմնականում կապուած են պարսկերէնի ու թիրքերէնի հնչիւնական եւ տառային համակարգերի, նաեւ լեզուամտածողութեան որոշ առանձնայատկութիւնների հետ:

ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԸ

Հայկական վանքերն ու եկեղեցիները Մատենադարանի պարսկերէն վաւերագրերում սովորաբար նշում են այն բնակավայրերի անուններով, որոնցում դրանք գտնուում են, ինչպէս օրինակ Ագուլիսի Վանք, Դարաշամբի Վանք, Շոռոթի, Բիստի՝ ու Մուղնու վանք. եկեղեցիների անունները (Ս. Ստեփաննոս Նախավկայ, Ս. Թովմա Առաքեալ, Ս. Աստուածածին, Ս. Թադէի եւն.)՝ սովորաբար չեն նշում: Եկեղեցիների անուանումները հազուադէպ նշում են միայն այն դէպքում, երբ հրամանագիրը հրապարակում էր թոյլատրելու համար տուեալ եկեղեցու,

վերանորոգումը², կամ երբ մէկ վայրի անուան հետ էին կապում մէկից աւելի վանքերի անուններ, ինչպէս օրինակ Քասաղի ձորում գտնուող Օհանավանքն ու Սաղմոսավանքը³:

Այս դէպքերում նշուող վանքերի անուններում եղած փոփոխութիւնները տեղի էին ունենում նոյն կերպ, ինչպէս որ տեղանուններում էին կատարում, ուստի այդ դէպքերը կը դիտարկուեն տեղանունանական փոփոխուած տարբերակները ներկայացնող մասում:

Էջմիածնի վանքը պարսկերէն փաստաթղթերում ու այլ աղբիւրներում հանդէս է գալիս «Ուչքիլիսա» անուամբ, որը թիւրքերէն նշանակում է «երեք վանք»՝ մէկ անուան մէջ ընդգրկելով նաեւ Էջմիածնին մօտ գտնուող Ս. Գայիանէի ու Ս. Հռիփսիմէի վանքերը: Նոյն անուամբ է հանդէս գալիս նաեւ Վաղարշապատ գիւղը, որտեղ գտնուում է Էջմիածնի Վանքը: Ուչքիլիսա են կոչուել նաեւ պատմական Հայաստանի միքանի այլ հայկական վանքեր ու գիւղեր⁴, այնուամենայնիւ, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերում նշուող «Ուչքիլիսա» անուանումը վերաբերում է միայն Էջմիածնի վանքին:

Որոշ վանքերի անուանումը կապում է այն քարերի գոյնի թիւրքերէն տարբերակի հետ, որոնցով կառուցուել են, ինչպէս Ղարաքիլիսա եւ Ղըզըլքիլիսա կամ Ղըզըլվանք անուանումները, որոնցից առաջինը թիւրքերէնից թարգմանաբար նշանակում է «սեւ վանք», միւրը՝ «կարմիր վանք»: Ընդ որում յայտնի են միքանի հայկական վանքեր, որոնք պարսկերէն վաւերագրերում հանդէս են գալիս այդ անուանումներով:

1489ի մի կալուածագրում Ղըզըլվանք է կոչուում Չուխուր Սա'ադի Վիլայէթի մէջ մտնող Գառնիի շրջանի մի գիւղ, որ պատկանում էր Հաւուցթառի Զաքարիա վարդապետին, իսկ վանքը նշում է հենց այդպէս՝ «Հաւուսթառ – هوستار»⁵: Ինչպէս յայտնի է դառնում որոշ ժամանակ անց՝ 1505 եւ 1526ին գրուած վաւերագրերից, այդ անունը գործածուում էր նաեւ Հաւուցթառի Վանքի համար⁶: Ղըզըլվանք էր կոչուում նաեւ Սիւնիքի վանքերից մէկը, որի վերանորոգման համար հրովարտակ է ձեռք բերում 1669ին⁷: Հայր Ղեւոնդ Ալիշանը այդ անուամբ է նշում Վաղարշին գիւղի եկեղեցին, որը կոչուել է Ս. Ստեփաննոս Նախավկայ եւ յայտնի է նաեւ Կարմիր Վանք անուամբ, նաեւ Աստապատ գիւղի Ս. Ստեփաննոս վանքը⁸: Պարսկերէն վաւերագրերի մէջ կան այս երեք վանքերին էլ վերաբերող փաստաթղթեր: Աստապատի Ղըզըլվանքին են

վերաբերում ԺԹ. դարի սկզբի մի քանի պարսկերէն վաւերագրեր, որոնք խօսում են վանքի ծանր դրութեան ու այդ կապակցութեամբ Նախիջեւանի խանի նամակագրութեան, նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմի նախաձեռնութեամբ ու թագաժառանգ Աբբաս Միրզայի հաստատմամբ կատարուած վանքի առաջնորդի դիրքում Խաչատուր Եպիսկոպոսի նշանակման ու որոշ հարկերի կրճատման մասին⁹: Պարսկերէն վաւերագրերում հայոց վանքերի այս միանման անուանումները ոչ միայն յաճախ շփոթութեան առարկայ էին դառնում, այլեւ անօրինական յաւակնութիւնների հնարաւորութիւն տալիս որոշ անազնիւ անձանց: Այս կապակցութեամբ հետաքրքրութեան է արժանի շահ Սուլէյմանի 1675ի հրովարտակը, որին կցուած խնդրագրում նշուում է, որ «*Սեֆի Ղուլի խանի օրօք Առաքել անունով մի վանական բարձրագոյն պալատ գալով՝ կեղծ խնդրագիր է ներկայացրել, թէ [իրեն ենթակայ] վանքի անունը Կըզըլվանք է եւ ցանկանում էր այդ խաչը վերցնել ու ֆարանգի երկիրը (Եւրոպա) տանել: Նուաստս խնդրագրով դիմեցի Սեֆի Ղուլի խանին: Վերջինս, այդ խաչը վերցնելով, նուաստիս տուեց, եւ տեսնելով, որ նրա պահանջն անհիմն է, ցանկացաւ նրան պատժել*»¹⁰: Տուեալ դէպքում խօսքը թերեւս Առաքել Բոպիկ Շոռթթցու մասին է (1613-1680), որը ծագումով Աստապատից էր եւ 1649ից դառնալով Երնջակի Ս. Կարապետի վանքի առաջնորդը եւ Նախիջեւանի արքեպիսկոպոսը¹¹, հաւանաբար փորձել է օգտուել Աստապատի Ս. Ստեփաննոս Վանքի օտարահունչ Ղըզըլվանք տարբերակի հետ նոյնականութիւնից եւ իր կաթողիկամէտ գործունէութեանը¹² համապատասխան Եւրոպա տանել պարսկերէն վաւերագրերում նոյն Կըզըլվանք անուամբ նշուող Հաւուցթառի Վանքի խաչը, որի կապակցութեամբ էլ հրապարակուել է նշուած հրովարտակը:

Յայտնի են նաեւ միքանի Ղարաքիլիսաներ. մէկը Մակուի Ս. Թադէի Վանքի օտար անուանումն է, որին վերաբերող պարսկերէն փաստաթղթերը մեծ թիւ են կազմում Մատենադարանի կաթողիկոսական դիւանի արխիւում: Ալիշանը նշում է եւս միքանի Ղարաքիլիսաներ (Գարագիլիսէ) Այրարատ Նահանգում՝ Բագրեւանդում, Կարսում, Ապարանում¹³, որոնց վերաբերող պարսկերէն վաւերագրեր Մատենադարանի արխիւում չկան:

Հայոց վանքերը երբեմն դառնում էին հարեւան մահմեդականների ուխտատեղիները եւ արդիւնքում կրում նրանց

կողմից տրուած անուններ: Նման երեւոյթների հետ են կապուծ, մասնաւորապէս «Աղ Օղլան - թիւրք. Սպիտակ տղայ» անուան յիշատակութիւնը Արցախի Ամարասի Վանքի եւ Ծիծեռնաւանքի, ինչպէս նաեւ Դիզակ Գաւառում գտնուող մի մատուռ-ուխտատեղիի մասին¹⁴: Նման ուխտատեղի են հանդիսացել նաեւ Փիրջամալ Գիւղի հանդում գտնուող երկու մատուռները, որոնցում ըստ աւանդութեան ամփոփուած են «Փիրու եւ Ճամալի մարմինները, վասն որոյ ուխտաւորեղի է յարգուած է ոչ միայն հայերից այլեւ մահմեդականներից»¹⁵: Այնուամենայնիւ տուեալ դէպքում կարծում ենք, որ անուան հիմքում մէկ մարդու անունն է՝ «Ջամալ», իսկ «փիր» բառը, որը պարսկերէն նշանակում է «ծեր, շէյխ, հոգեւոր առաջնորդ եւ մարգարէի հետեւորդ», այդ անուան լրացումն է: Մատենադարանի պարսկերէն վաւերագրերից միքանիսը վերաբերում են Արցախի Ամարաս Վանքին (Աղ Օղլան), նոյնանուն գիւղին եւ Փիրջամալ բնակավայրին առնչուող խնդիրներին¹⁶:

Որոշակի պատմական իրողութիւնների հետ է կապուծ Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի «Դանիէլի Վանք» անուանումը՝ պարսկական աղբիւրներում, այդ թւում նաեւ Մատենադարանի պարսկերէն վաւերագրերում:

Ինչպէս յայտնի է դառնում շահ Սուլէյմանի 1668ի հրովարտակի հակառակ կողմում հրապարակուած միսալի (մահմեդական հոգեւորական դատական գերագոյն ատեանի վճռի) բովանդակութիւնից¹⁷, վանքի ու նրա կալուածքների նկատմամբ ԺԷ. դարի 60ականներին յաւակնութիւններ էին ցուցաբերում որոշ մահմեդականներ, որոնք սադրի դիւանին էին դիմել ու հրամանագիր ձեռք բերել այն մասին, թէ վանքի մօտակայքում է գտնուում Դանիէլ մարգարէի գերեզմանը եւ կան նրան պատկանող վակֆային կալուածքներ, որոնց մութաուալլին (տնօրէն, խնամակալ) է հայցորդը: Ու թէեւ այս պնդումը, ինչպէս նշում է վաւերագրում, անցկացուած քննութեան արդիւնքում հերքում է, սակայն, անշուշտ, նման խնդրի առկայութիւնը պէտք է, որ լուրջ դժուարութիւնների պատճառ դառնար վանքի միաբանների համար: Հարկ է նշել, որ ըստ աւանդութեան, Դանիէլ մարգարէի (Դանիէլը այդպիսին է համարում մահմեդական հաւատի աւանդոյթներում) գերեզմանը գտնուել է Շօշում (Սուզա), որի հետքերը այժմ էլ կան¹⁸: Այնուամենայնիւ այդ ժամանակից իվեր պարսկալեզու աղբիւրներում Դարաշամբի

Մաղարդա Վանքը անուանում է Ս. Դանիելի Վանք¹⁹, իսկ վանքի սրահներից մեկը համարում է «Դանիելի օջախը»²⁰:

ՉՈՒՍՈՒՐ ՍԱ՝ԱԴ ԵՒ ՂԱՐԱԲԱՂ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Պատմական իրողությունների հետ են կապուած նաեւ պարսկերէն վաւերագրերում գործածուող Արեւելեան Հայաստանի որոշ շրջանների անուանումները: Այրարատեան Նահանգի եւ Երեւանի Խանութին անուան հետ զուգահեռ, ԺԵ. դարից սկսած, պարսկերէն վաւերագրերում գործածական էր Չոխուր (Չուխուր) Սա՛դ անուանումը, որը հանդէս է գալիս նաեւ որպէս Սէֆեան Պետութեան վարչական միաւոր՝ «Չուխուր Սա՛դի Վիլայէթ» ձեւով: Այդ անուան ծագումը ուսումնասիրած Յակոբ Փափագեանը այն կապում է ԺԴ. դարի վերջերին Երասխաձորում, Սուրմալուի ու մերձակայ այլ վայրերում բնակուող թիւրքմէնական ցեղերն իր իշխանութեան ներքոյ միաւորած Ամիր Սա՛դի անուան հետ²¹: Այդ շրջանները սկսում են կոչուել «Չուխուր Սա՛դ - چخورسعد» (Սա՛հդի փոս), հայկական աղբիւրներում՝ «Սահաթա փոս» կամ «Երկիրն Սահաթու»²²: Չուխուր Սա՛դ անուան առաջին յիշատակութիւնը գտնում ենք 1428ի Վաղարշապատին վերաբերող կալուածագրում, որտեղ այդ գիւղը նշում է «Վրաստանի շրջաններից Ազէրբայջանի երկրին ենթակայ Չուխուր Սա՛դի վիլայէթում»²³: Այս անուանումը յաճախ է հանդիպում պարսկերէն վաւերագրերում ու այլ աղբիւրներում՝ գործածուելով ընդհուպ մինչեւ նրա միացումը Ռուսաստանին՝ 1828ին:

Ներկայիս Արցախի Հանրապետութեան ու նրան կից որոշ շրջանների ընդհանրական անուանումը արաբական խալիֆայութեան ժամանակաշրջանում «Առան»ն էր: Այս անուանումը արաբական աղբիւրներից սահուն անցում է կատարում պարսկական պատմա-աշխարհագրական գրականութեան մէջ եւ գործածական էր մինչեւ ԺԹ. դար: Սակայն պարսկերէն վաւերագրերում Կուրի եւ Արաքսի միջեւ ընկած Գանձակ-Ղարաբաղի բեկլարբէկութեան տարածքի վերաբերութեամբ այն գործածում էր սէֆեան ժամանակաշրջանի վաւերագրերում մինչեւ այդ պետութեան անկումը²⁴: Յիշեալ տարածքի վերաբերութեամբ նոյն, սէֆեան ժամանակաշրջանի վաւերագրերում օգտագործում են նաեւ «Գանձակ» ու առաւել յաճախ՝ «Ղարաբաղ» անուանումները: «Աղուանք - آغ وانك» անուանումը²⁵ առկայ է միայն Աղուանից Կաթողիկոսութեանը

վերաբերող պարսկերէն վաւերագրերում եւ օգտագործում է բացառապէս Գանձասարի Կաթողիկոսութեան իմաստով²⁶:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում «Ղարաբաղ» անուան պատմութիւնը, որն առաջին անգամ յիշատակում է իրանցի պատմագիր Ռաշիդ ալ-Դինն (1247-1318) իր «Տարեգրութիւնների ժողովածու» պատմական աշխատութեան մէջ, որպէս Առանում գտնուող ձմեռանոցի անուանում: Նրա առաջին յիշատակութիւնը կապուած է Ահմէդ Իլխանի օրօք Կոնկուրտայի դէմ տարուող դատի հետ, որը տեղի է ունենում «Առանի Ղարաբաղում» 1284ին²⁷: Այս հեղինակի միւս յիշատակութիւնները կապում են Ղազան խանի 1295ի պաշտօնական թագադրութեան եւ 1301ին այդ վայրում իր ձմեռանոցը հաստատելու հետ²⁸: Եւ ամէն անգամ «Ղարաբաղ» անուանումը յիշատակելիս պատմագիրը շեշտում է, որ այն գտնուում է Առանում: Այս յիշատակութիւններն, անշուշտ, աւելի հին են, քան *Վրացական ժամանակագրութեան* եւ *Համդաւլահ Ղազուինիի ԺԴ*. Դարի յիշատակութիւնները, որոնք մինչ վերջերս համարւում էին հնագոյնը²⁹:

«Ղարաբաղ» անուանումը չի յիշատակւում Ռաշիդ ալ-Դինից մի փոքր վաղ հանդէս եկած պարսկալեզու մէկ այլ պատմագրի՝ Ալա ալ-Դին Ջուլէյնիի (մահ. 1283) «Աշխարհի Նուաճումը» երկում: Ջուլէյնին կուր-արաքսեան միջագետքի մասին խօսելիս այն նշում է «Առան» անուանմամբ: Ուստի եւ կարելի է ենթադրել, որ նրա կենդանութեան օրօք գործածական չէր «Ղարաբաղ» անուանումը:

ԺԶ. դարի առաջին կէսին անյայտ հեղինակի պարսկալեզու պատմագրական երկում որպէս Ղարաբաղի մէջ մտնող վայր երկու անգամ յիշատակւում է Սուլթանբուղդ³⁰, որն ըստ Մակար Եպս. Բարխուդարեանցի՝ Կուրի եւ Խաչէնագետի աջ եւ Գարգառի ձախ ափերի ու դաշտաբերանի մէջ ընկած Արցախի Տուչքատակ կամ Տիգրանակերտ գաւառի ստորին մասում գտնուող «մի հողէ բերդ էր»³¹: Ամենայն հաւանականութեամբ՝ Ղարաբաղն այդ ժամանակաշրջանում ընդգրկում էր յիշեալ հայկական գաւառը, եւ ձմեռանոցային յարմար վայր էր պատմական Հայաստանի արեւելեան շրջաններն իրենց տիրապետութեանը ենթարկած մոնղոլ տիրակալների, այնուհետեւ նրանց փոխարինած Ակ Կոյունլու, Կարա Կոյունլու եւ սէֆեան իշխանութիւնների համար: Ուստի այդ տեղանունը շարունակաբար օգտագործւում է յետագայ պարսկալեզու պատմագրութեան մէջ ու փաստավաւերագրական նիւթերում՝

կիրառուելով աւելի ու աւելի յաճախ եւ ժամանակի ընթացքում տարածուելով շրջակայ աւելի ընդարձակ տարածքի վրայ:

«Ղարաբաղ» անուանումը գործածուում է ԺԵ.-ԺԶ. դարերում որպէս Առանում գտնուող ձմեռանոցային վայրի անուանում, մասնաւորապէս՝ Լենկ Թեմուրի պալատական պատմագիրներ Նեզամ ալ-Դին Շամիի ու Շարաֆ ալ-Դին Եգդիի «Գիրք Յաղթութիւնների», Ալ-Կոյունլու պետութեան պատմագիր Ֆազլուլլահ իբն Ռուզբիհան Խունջիի «Ամինի Պատմութիւն» պատմագրական երկերում³²: ԺԶ. դարի պարսկալեզու պատմագիր ազգութեամբ քուրդ Շարաֆ խան Բիթլիսին ոչ միայն միջանի անգամ յիշատակում է «Ղարաբաղ» տեղանունը որպէս Առանում գտնուող ձմեռանոցի անուանում³³, այլեւ նշում է, որ շահ Թահմասպ Ա.ը 1550ին ձմեռն անց է կացնում Առանի Ղարաբաղում³⁴: Այնուհետեւ, անդրադառնալով 1579-1580ի դէպքերին՝ նա Գանձակի բէկլարբէկին անուանում է «Գանձակի, Բարդայի ու Առանի Ղարաբաղի վայրի Իմամ Ղուլի սուլթան»³⁵, իսկ նրան ենթակայ տարածքը՝ «Գանձակի, Ղարաբաղի ու Բարդայի վիլայէթ»³⁶: Ուստի ակնյայտ է, որ մինչեւ ԺԷ. դարը «Ղարաբաղը» ընկալուել է որպէս կուր-արաքսեան հովտում գտնուող մի ձմեռանոցային շրջան, որտեղ ինչպէս իլխանական ժամանակաշրջանում, այնպէս էլ յետագայում սովորաբար ձմեռում էին քոչուոր ցեղերը եւ նրանց աւագանին:

«Ղարաբաղ» անուանումը Գանձակի բէկլարբէկութեան վրայ տարածուել է ուշ սէֆեան տիրապետութեան ժամանակաշրջանում եւ աւելի յաճախ սկսում է գործածուել ԺԷ. դարում³⁷: ԺԷ. դարի երկրորդ կէսից այս անուանումը պարսկական վաւերագրերում աւելի ու աւելի յաճախ է գործածուում Գանձակի բէկլարբէկութեան իմաստով «Գանձակ»ի փոխարէն կամ նրա հետ միաժամանակ³⁸: ԺԷ. դարի երկրորդ կէսին, պարսկերէն աշխարհագրական երկում Ղարաբաղը նշում է որպէս մի «շրջան, որտեղ կան քաղաքներ, մեծ բնակավայրեր ու ամրոցներ, եւ այնտեղ էր գտնուում զօրք ունեցող հզօր ու անկախ բէկլարբէկերի ամրացուած նստավայրը: Ըստ պատմագիրների՝ դա մի երկիր է, որ գտնուում է Շիրվանի ու Արրպարականի միջեւ»³⁹:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՂԱԻԱՂՈՒՄՆԵՐԸ

Արեւելեան Հայաստանի շրջանների ու բնակավայրերի հայկական անուանումների հետ զուգահեռաբար գործածուող

օտար անուանումները, որոնք տրուել են այլազգի հարեանների կամ տիրապետողների կողմից, ըստ իրենց բնոյթի կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբում կ'առանձնացնէինք աղաաւումների հետեանքով ի յայտ եկած տարբերակները: Այս աղաաւումները հիմնականում պայմանաւորուած էին տեղանքի նկատմամբ գերիշխանութիւն ձեռք բերած ժողովրդի լեզուական առանձնայատկութիւններով եւ յարմարեցնում էին դրանք տուեալ լեզուի հնչիւնական ու տառային համակարգին, երբ որոշ հայերէն հնչիւններ որոնք պարսկերէնում չկան օրինակ **Յ**ն հանդէս է գալիս **U**-س կամ թս-تس տառերով՝ Աղվերց-Աղվերս-اقورس⁴⁰, Հաւուցթառ-Հաւութառ, هوستاروانك⁴¹, Մանկանոց-Մանկանոս-منكانوس, Ֆրանկանոց-Ֆրանկանոս-فرنكانوس⁴², Կից-كيس⁴³, Աղջոց-اقچوتس⁴⁴: Հնչիւնական ձեւափոխումները առանձին դէպքերում լինում էին կամայական բնոյթի, երբեմն ի յայտ գալով բառի գրութեան սխալ ընթերցման հետեանքով, որոնք մէկ անգամ այդպէս հանդէս գալուց յետոյ կրկնուում էին յետագայ վաւերագրերում. ինչպէս օրինակ Շոռոթ անուան փոխարէն հիմնականում հանդէս է գալիս Շոռլութ տարբերակը⁴⁵, Անգեղակոթի փոխարէն՝ Անգելակոթը⁴⁶, Սաղմոսավանքի փոխարէն՝ Սարմոսավանք⁴⁷:

Տեղի էին ունենում անուանումների կրճատումներ թէ՛ սկզբից, թէ՛ վերջից: Վաւերագրերից միքանիսում կրճատուել էր, օրինակ, Ֆրանկանոցի «անոց» ածանցը՝ մնալով միայն «Ֆրանկ-فرنك»⁴⁸, իսկ Մանկանոց գիւղը դարձել է «Մանկուս-منكوس»⁴⁹: Հիմնականում առանց Խոր բաղադրիչի է հանդէս գալիս Խորվիրապ անուանումը՝ «ویراب-իրաբ» ձեւով⁵⁰:

Երբեմն Արեւելեան Հայաստանի տեղանունների աղաաւուման պատճառ էին դառնում տառերի բնագրային սխալ ընթերցումները, որոնք յաճախակի էին տեղի ունենում կէտերի բացթողման ու աւելացման հետեանքով եւ յանգեցնում սխալ տարբերակների ամրագրմանը: Նման բնագրային աղաաւուման ու սխալ ընթերցման հետեանք կարելի է համարել հ-խ, թ-ս, ն-լ, գ-ր, չ-ջ անցումները Հունան (حنان)-Խունան (خنان), Վարդան[ակերտ] (ورتان)-Վարսան (ورشان)⁵¹, Չաւնդուր (چوندور)-Չուլդուր (կամ Չըլդըր) (چولدور)⁵², Քոչիզ (كوچيز)-Քոջիր⁵³ (كوچير) տարբերակներում:

Արաբական այբուբէնում որոշ ձայնաւորների չգրուելն էլ աւելի դժուարացնում էր հայերէն տեղանունների գրութիւնն այդ տառերով, ինչպէս օրինակ, Աղաւնատուն տեղանունը, որի

գրութիւնը տարբեր վաւերագրերում տարբեր է (Աղունադուն-⁵⁴أقونادون, Աղունադին-⁵⁵أغنه دين, Աղունադան-⁵⁶أغندن):

Տառային փոփոխութիւններում յաճախակի է ր-ի փոխարինումը լ-ով: Նման փոփոխութիւն է տեղի ունեցել Երնջակ Գաւառի ու նոյնանուն բերդի անուան հետ⁵⁷, որը պարսկերէն վաւերագրերում նշում է Ալինջա կամ Ալնջաղ-النّجق ձեւով⁵⁸ եւ այդ կերպ է յիշատակում պարսկերէն աղբիւրներում արդէն ԺԴ դարում⁵⁹:

Նման աղաւաղման հետեւանքով հայկական աղբիւրներում յիշատակուող Ճարաբերդ կամ Չարաբերդի (ներկայիս՝ Զրաբերդի)⁶⁰ փոխարէն պարսկական վաւերագրերում ու այլ աղբիւրներում հանդիպում են «Ջալբերդ (Ջալփերդ) կամ Չելբերդ-چله برد» տարբերակները⁶¹:

Է՛լ աւելի ձեւափոխուած տարբերակ է Չորման տեղանունը, որը որոշ հետազոտողների կարծիքով հանդիսանում է հայկական Շիրմանանց բնակավայրի անուանումը⁶²: Չորման բնակավայրի յիշատակութիւնը պարսկերէն վաւերագրերում կապում է Արցախի Քոլատակ ու Առաջաձոր բնակավայրերի միջեւ ծագած խնդիրների հետ⁶³: Իսկ այն հանգամանքը, որ Չորմանի տանուտէրը Խաչէնի Ղազանչի, Չորման, Ներքին Քոլատակ, Բազարքենդ, Բալլուղայա, Դոշանլու, Խնձիրստան, Տամկալէ, Վանք, Շալուա եւ միքանի այլ գիւղերի տանուտէրերի ու աւագների հետ յիշատակում է ԺԸ. Դարի առաջին կէսում Առաջաձոր գիւղի աւագերէց Դաւթի մելիքութեանը համաձայնութիւն տրուած համախօսականում⁶⁴, խօսում է բնակավայրի էթնիկ կազմի հայկական լինելու մասին:

Աղաւաղուած տարբերակներ, ստանում էին նաեւ իմաստային որոշ երանգաւորումներ: Նման փոփոխութեան է ենթարկուել Նախիջեւանի հայկական Աստապատ անուանումը՝ դառնալով Եզդաբադ, որտեղ «եզդ»ը (آزد) «աստուած» բառն է, իսկ աբադ բաղադրիչի գործածումը կիրառում էր ինչպէս հայկական այնպէս էլ պարսկական տեղանուններում, ինչպիսիք են Աստարաբադ, Աշխաբադ եւն.⁶⁵: Այն հին հայկական բնակավայրերից է, որն Աստապատ ձեւով յիշատակում է հայ պատմիչների կողմից, սկսած՝ Թ. դարից⁶⁶: Նադիր շահի մահից յետոյ Նախիջեւանում զարգացող իրադարձութիւնները նկարագրող Հայր Միքայէլ Չամչեանը հաւաստում է, որ այդ շրջանում դեռեւս նրա «բնակիչք գրեթէ բոլոր հայք էին»⁶⁷: ԺԹ. դարի սկզբին այդ գիւղի տեղում Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզան կառուցում է մի բերդ եւ անուանում այն

Աբբասաբադ, իսկ գիւղի բնակիչներին տեղափոխում քիչ դէպի հիւսիս: Այդ նոր վայրը եւս անուանում է Աստապատ կամ Թազաքեանտ⁶⁸:

Հայկական տեղանունների աղաւաղումներն ու ձեւափոխումները ակնյայտ են Քաշաթաղի պատմութեանը վերաբերող մի պարսկերէն վաւերագրում, որով 1691ին այնտեղի մի շարք հայկական գիւղերի աւագներն ու տանուտէրերն իրենց համաձայնութիւնն էին տալիս Մելիք Հախնազարի որդի Իլիասին որպէս իրենց լիազօր ներկայացուցիչը հաստատելու հարցում: Այդ փաստաթղթում Քաշաթաղի շրջանը նշում է Քոշթասֆ ձեւով, Հոչանց գիւղը՝ Հոչաս, իսկ Աղբաթխերտ (նաեւ Ալպատխիր, Աղուատխէր, Ալբադխիո) գիւղը, որ գտնւում է Աղաւնոյ գետակի վերնահովտում, յիշատակում է Աֆաթխար (آفتخر) ձեւով⁶⁹: Եթէ փորձենք իմաստային վերլուծութեան ենթարկել «աֆաթխար» բառը, ապա այն պարսկերէնից թարգմանաբար կարելի է ընկալել որպէս «մեծ աղէտ կամ վնաս»: Քաշաթաղ գաւառը այլ վաւերագրերում եւս նշում է Քոշթասֆ ձեւով⁷⁰, որը, սակայն, չպէտք է շփոթել Կուրից մինչեւ Կասպից Ծով ձգուող նոյնանուն շրջանի հետ⁷¹: Այս դէպքում եւս տեղանունը ստացել է իմաստային երանգաւորում: «Քոշթ-է ասաֆ կամ ասաֆի-اسفت اسفی» բառակապակցութիւնը պարսկերէն կարելի է հասկանալ «զուր սպանութիւն» իմաստով:

Աղաւաղման հետեւանքով իյայտ է եկել «Զառուզիբիլ-زاروزيبيل» անուանումը, որը ԺԷ. դարից տարածւում էր Ծար գաւառի վրայ⁷²: Զառուզիբիլ տեղանունը ծագել է Ծար գաւառի եւ նրա Տպել բնակավայրի աղաւաղուած Զիբիլ տարբերակի կցումից: Տպելը յիշատակում է ԺԲ.-ԺԸ. դարերի հայկական աղբիւրներում որպէս Թարթառի վտակ Թութխուի հովտում գտնուող տարածքի անուանում, որը յետագայում տեղայնացւում է գաւառի գիւղերից մէկի վրայ⁷³: Զառուզիբիլը որպէս շրջանի անուանում գործածւում է նաեւ ԺԷ. դարի միջանի այլ վաւերագրերում⁷⁴: Զառուզիբիլը Իրանի սէֆեան տիրապետութեան շրջանում մտնում էր Չոխուր Սա'ադի (կամ Երեւանի) բէկլարբէկութեան մէջ⁷⁵: Զառուզիբիլ գաւառի հայութեան հիմնական արտագաղթը տեղի է ունեցել 1725ին, եւ յետագայ 2-3 տարիների ընթացքում այն գրեթէ ամբողջովին դատարկուել է: Այնպէս որ, 1760ականներին նրա տարածքը գրեթէ լիովին հայազրկուել էր՝ բացառութեամբ Խութաւան Գիւղից եւ թեմական կենտրոն Դադի Վանքից⁷⁶: Պարսկերէն վաւերագրերում

այն ստացել է հետեւեալ իմաստային երանգաւորումը՝ «ողբ եւ աղբ (կամ անպէտքութիւն)»:

Այս երեւոյթը հանդիպում է նաեւ օսմանեան տիրապետութեան տակ գտնուող հայաբնակ տարածքների անունների թիրքական տարբերակներում: Մասնաւորապէս, Էլիա Չելեբին ԺԷ. դարում փորձում է թիրքերէնով ստուգաբանել հայկական Բայբերդ-Բաբերդի-Բայբուրդ, Ճորոխ գետանուան Ջուիռուի, Ակն քաղաքի Էգին օտարահունչ տարբերակները⁷⁷:

Աւելի ուշ շրջանում, մասնաւորապէս՝ ԺԹ. դարում, եւս տեղի են ունենում անուանումների ձեւափոխումներ, եւ դրանք ստանում են իմաստային նոր երանգաւորումներ: Օրինակ՝ Շուշի անուանումը երբեմն հանդէս է գալիս «Շիշէ-شيشه» ձեւով, որ պարսկերէն նշանակում է «ապակի»⁷⁸: Պարսկերէն վաւերագրերից մէկի ԺԹ. դարի պատճէնում կարդում ենք. «գրեց Քարքալայի Մուսթուֆիի որդի Ջաբրայիլը, 1309ի ջումադի առաջին ամսի 25ին»⁷⁹, Շիշէում»⁸⁰: ԺԹ. դարի պարսկալեզու պատմագիր Միրզա Եուսուֆ Ներսէսովի «Ճշմարտացի Պատմութիւն» պատմագրական երկում 1795ին Աղա Մուհամմադ խանի անունից Շուշիի պաշտպաններին եւ Ղարաբաղի Իբրահիմ խանին ուղղուած յանդիմանական խօսքերում ու սպառնալիքներում Շուշին համեմատում է ապակու («շիշէ») հետ:

ՔԵՆԴ ԲԱՂԱԴՐԻՉԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ

«Շուշի» տեղանունը նախապէս վերաբերել է Շուշի քաղաքի արեւելեան կողմի ձորամէջում գտնուող հայկական բնակավայրին⁸¹, որը «Շուշի-Շօշ» ձեւերով յիշատակում է դեռեւս 1428ին գրուած մի Աւետարանում⁸²: Իսկ իրանական ծագում ունեցող -քենդ բաղադրիչը, որն իրանական լեզուներում որպէս բայանուն (kanta-kathä-kat-katha) ունի «քաղաք, տուն» իմաստը⁸³, այդ տեղանունանը աւելացուել է միայն յետագայում, Շուշի քաղաքի հիմնադրումից ու զարգացումից յետոյ՝ դարձնելով այն Շուշիքենդ եւ քաղաքից տարբերակելու համար⁸⁴: Վերոյիշեալ քենդ-քէթ-ղանդ բայանունն ունեցող տեղանունները տարածուած են յատկապէս Միջին Ասիայում՝ Ախսիքէթ, Բայքենդ, Բունջիքէթ, Վաքքենդ, Կոկանդ, Շուքուրքենդ եւն.⁸⁵:

Վերը նշուած Շուշիքենդ անուանումն ու միքանի այլ անուանումներ ցոյց են տալիս, որ «քենդ» բաղադրիչը յաճախ

պարզապես կցուել է հայկական տեղանուններին հիմնականում ուշ շրջանում (ԺԸ.-ԺԹ. դարեր)՝ տալով նրանց օտար հնչողութիւն, ինչպէս, օրինակ, Քարվաճառի Մոզքենդ Գիւղի դէպքում, կամ էլ հանդէս է գալիս որպէս նրա օտարահունչ տարբերակի բաղադրիչ: Մոզքենդի «քենդ» բաղադրիչը անելացել է Մոս կամ Մոզ տեղանունը ԺԸ. դարից յետոյ⁸⁶: Մոզը (Մոս) որպէս Սինիքին կից շրջանի անուանում յիշում է հայ պատմիչների երկերում է. դարից⁸⁷: Պահպանուել է 1653-1654ին Ծարի Մոս Գիւղում Մարտիրոս Խնձորեսկցու կողմից ընդօրինակուած մի Աւետարան⁸⁸: Այդ գիւղը Մոս ձեւով յիշատակում է նաեւ ԺԸ. դարի կէսին Խուրթավանքի (կամ Դադի Վանքի) կալուածացուցակում⁸⁹:

Որպէս կանոն՝ տեղանունների մէջ «քենդ» վերջաւորութիւնը մատնացոյց է անում տուեալ բնակավայրի բնակչութեան նստակեաց լինելը, ուստի եւ տրուել է հիմնականում հայկական բնակավայրերին: Այս փաստը յստակ արտացոլուել է 1823ին Ղարաբաղում ռուսական իշխանութիւնների կողմից անցկացուած վիճակագրական նկարագրութեան մէջ, որտեղ որպէս հայկական բնակավայրեր նշում են Մխիթարքենդը, Աղքենդը, Քեշիշքենդը, Մեհիքենդը (Մէյտիշէն) Խաչէն գաւառում, որ հիմնուել է 1828ին, Մաղաթքենդը Վարանդայում, Աղջէքենդը Դիզակում են.⁹⁰: Այս երեւոյթն արտացոլուել է նաեւ Դարաշամբի Օրթաքենդ, Դիքքենդ ու Բաշքենդ⁹¹, Երեւանի Նահանգի Դարաքենդ (Ձորագեղ)⁹², Ղրխբուլաղի Չելեքի[քենդ] (նաեւ Քեշիշքենդ կամ Այդինդարուիշ)⁹³, Սինիքի Աղաքենդ⁹⁴, Դիզակի Աղջաքենդ⁹⁵ գիւղերի պատմութեանը վերաբերող Մատենադարանի պարսկերէն վաւերագրերում:

Քենդ բաղադրիչով առանձին անուանումները երբեմն մատնանշում են նաեւ որեւէ մեծ բնակավայրի առանձին թաղամասերը, ինչպէս, օրինակ, Գանձակի հայկական թաղամասերից երկուսը՝ Քիլիսաքենդը (Եկեղեցու թաղամաս) եւ Ենիքենդը (Նորաշէն): Քիլիսաքենդը Գանձակ Քաղաքի հայկական թաղամասերից ամենամեծն էր, որը գտնուում էր Գանձակ Գետի ձախափնեակում եւ անելի բարձր դիրք էր զբաղեցնում մահմեդական թաղամասերի համեմատութեամբ: Ենիքենդը⁹⁶ գտնուում էր Գանձակի թրքաբնակ հատուածում՝ նշանաւոր «մէդանից» (հրապարակ) դէպի հիւսիս-արեւմուտք: Գանձակի այս երկու հայկական թաղամասերի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութեան ներկայացուցիչների անուններն ու ստորագրութիւնները նշում են 1794ին կազմուած պարս-

կերէն մի համախօսականում, որով հայ բարձրաստիճան հոգեւորականների, հայ մելիքների ու Աղուանից Կաթողիկոսութեանը հպատակ հայութեան անունից ընդհանուր համաձայնութիւն էր տրուում Սարգիս Հասան Զալալեանի՝ Աղուանից կաթողիկոս հաստատուելուն⁹⁷:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Մեծ խումբ են կազմում այն օտար անուանումները, որոնք հայկական տեղանունների թարգմանեալ տարբերակներն են, ընդ որում բառի առաջին բաղադրիչի թարգմանեալ տարբերակը երբեմն կարող էր զուգակցուել քենդ բայանուան հետ՝ երբեմն փոխարինելով հայերէն «շէնգիւղ» բառին (Վաճառ-Բազարքենդ, Գետաշէն-Չայքենդ, Երիցուշէն-Քեշիշքենդ են.): Խաչէնի Քարազլուխ կամ Շիկաքար կոչուած բնակավայրի անուանումների շարքում յիշատակուում են նաեւ Դաշուշէն ու Դաշքենդ (դաշ - թիրքերէն նշանակում է «քար») տարբերակները⁹⁸:

Հայկական Գետաշէն անուանումը յիշատակուում է ԺԷ. դարից: Մասնաւորապէս 1621ին այն նշուում է նրա վրայ վրացական զօրքի յարձակման կապակցութեամբ⁹⁹: Գիւղը Գետաշէն է կոչուում ԺԸ. դարի երկրորդ կէսին այնտեղ այցելած Յովսէփ Էմինի գրքում¹⁰⁰: Պարսկական վաւերագրերում, որոնք վերաբերում են Գետաշէնի Մելիք Մնացականեանների պատմութեանը, ԺԸ. դարից գիւղի անուանումը յիշատակուում է «Չայքենդ» ձեւով, որը «Գետաշէն» անուան բառացի թարգմանութիւնն է¹⁰¹:

Խաչէնի Առաջածոր գիւղից մէկ մղոն հեռաւորութեան վրայ գտնուող հայկական Վաճառ գիւղը¹⁰², որը Բարխուդարեանցի վկայութեամբ Ծմակահող գիւղի հին անուանումն էր, ունի օտար Պազարքենդ կամ Բազարքենդ տարբերակը: Այս բնակավայրը, գտնուելով քոչուոր անասնապահների հարթավայրային շրջաններից դէպի լեռնային արօտավայր քոչելու ճանապարհին, զարգանում էր հայ գիւղացիների ու արհեստաւորների հետ առետրի շնորհիւ¹⁰³: Բնակավայրը ԺԹ. դարի երկրորդ կէսին ունէր 40 ծուխ հայ բնակիչ եւ ԺԳ. դարի արձանագրութիւններ ունեցող Ս. Ստեփանոս եկեղեցի¹⁰⁴: Խաչէնի «Բազարքենդ»-بازارکند» անուամբ հայկական գիւղը յիշատակուում է Մատենադարանի ԺԷ. դարի պարսկական վաւերագրերում, որոնք կազմուել են գիւղին

վերաբերող զանազան խնդիրների կապակցությամբ եւ բովանդակում են այդ խնդիրների լուծման նպատակով՝ իր պաշտօնեաներին ուղղած Գանձակի բեկլարբեկի հրահանգները¹⁰⁵:

Տեղանունների թարգմանության եւ այդ կերպ իւրացման գործընթացն առաւել բնորոշ էր հայաբնակ վայրերի հարեւանութեամբ հաստատուած թիրքական ցեղերին¹⁰⁶ եւ ընդունելի՝ պատմական Հայաստանի տարածքում հաստատուած Կարա-Կոյունլու ու Ակ-Կոյունլու, սէֆեան, աֆշարական ու ղաջարական մահմեդական իշխանութիւնների համար, որոնք թէեւ իրանական պետականութեան շարունակողներն էին, սակայն թիրքազգի էին եւ Արեւելեան Հայաստանի տարածքում յենւում էին հիմնականում թիրքական ցեղերի ու նրանց աւագանու վրայ:

Արդիւնքում՝ չնայած որպէս գրագրութեան լեզու շրջանառուող պարսկերէնին՝ վաւերագրերում հայկական բնակավայրերն ու շրջանները հանդէս են գալիս թիրքերէն թարգմանական տարբերակներով, կամ պարսկերէն բառերի թիրքացուած հնչողութեամբ, ինչպէս օրինակ «Դարաչիչաք-دره چيچک» անուանումն¹⁰⁷ է հայոց Ծաղկունիք, Ծաղկունեաց Ձոր (Վարաժնունիք) Գաւառի փոխարէն¹⁰⁸:

Երբեմն օտար թարգմանական տարբերակով օգտագործւում էին տեղանուննր կից Վերին, Ներքին, Մեծ, Փոքր, Հարաւային եւ Հիւսիսային բառերը: Այս բաղադրիչները օգտագործւում են կրկնուող տեղանունների հետ: Վարանդայի Հարաւային կամ Արեգդէմ Ճարտար (թիրք. Գիւնէ Ճարտար) եւ Հիւսիսային Ճարտար (թիրք. Ղուզի Ճարտար) գիւղերի անուանումները կապուած են այդ բնակավայրերի՝ մի սարի հիւսիսային ու հարաւային լանջերին գտնուելու հետ¹⁰⁹: Պարսկական վաւերագրերում հանդիպում են «Սաֆլա (պարսկ. سفله – سفلى) - Ստորին (կամ Ներքին)» եւ «Ալիյա (պարսկ. عليا) - Վերին» բառերը մասնաւորապէս՝ Քոլատակ տեղանունի հետ¹¹⁰: Այս բաղադրիչները օգտագործւում են նաեւ Ագուլիս անունի հետ. Վերին Ագուլիս (Ագուլիս-է Ալիյա-عليا اگليس) ու Ներքին Ագուլիս (Ագուլիս-է Սաֆլա-اگليس سفلى)¹¹¹:

Մատենադարանի կաթողիկոսական դիւանում պահպանուել են պարսկերէն կալուածագրեր, որոնք վերաբերում են Արցախի Թաղ-է Թանգի (طاق تنگی) պարսկ. Փոքր կամ Նեղ Թաղ), եւ Թաղ-է Ալիյա (طاق عليا) պարսկ. Վերին Թաղ) գիւղերի պատմութեանը: Յիշեալ վաւերագրերում այդ տեղանունները մշտապէս նշւում են Առանի

կամ Ղարաբաղի Դիզակի շրջանում, եւ որպէս նրա հարեւան շրջան նշում է Հաքարիի (Հագարա կամ Աղանոյ Գետի) շրջանը¹¹²: Միքանի կալուածագրերում յիշատակում են դրա հարեւանութեամբ գտնուող Տումի, Աղջաքենդ, Փարաջան, Հադրութ գիւղերը¹¹³: Ուստի կարծում ենք, ճիշտ է յիշեալ տեղանունների նոյնացումը Արցախի Բերձոր կամ Բերդաձոր Գաւառի աւերակ հայկական բնակավայրերի թում Բարխուդարեանցի կողմից յիշատակուած Հին Փոքր Թաղլար եւ Հին Մեծ Թաղլար տեղանունների հետ¹¹⁴, որոնք հայագէտ Ալեքսան Յակոբեանը իրաւացիօրէն նոյնացրել է Հին Թաղերի հետ¹¹⁵: Հարկ է նշել նաեւ, որ Վարանդայում նշուող Թաղլարի բնակիչները թէ՛ ըստ Ս. Ջալալեանի եւ թէ՛ ըստ Բարխուդարեանցի՝ եղել են Դիզակի վերը նշուած Թաղլար կամ Թաղեր բնակավայրի վերաբնակիչները¹¹⁶: Այս տուեալները եւ յիշեալ գիւղերի նշուած չլինելը 1823ին Ղարաբաղի վիճակագրական նկարագրութեան մէջ, հիմք են տալիս ենթադրելու, որ Դիզակի Հին Թաղերի բնակիչները ԺԹ. դարի սկզբին ռուս-իրանական պատերազմների ընթացքում հաւանաբար լքել են իրենց նախնական բնակավայրերը եւ այնուհետեւ վերահաստատուել Վարանդայի վերոյիշեալ վայրերում:

ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊՈՒՈՂ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐ

Օտարալեզու հարեւանները բնակավայրերին նոր անուանումներ էին տալիս՝ ելնելով նաեւ այն հանգամանքից, թէ ինչպէս էին նրանք ընկալում տուեալ բնակավայրն ու նրա բնակիչներին, այսինքն՝ տուեալ բնակավայրին տալիս էին նոր անուանում՝ ելնելով այդ վայրին ու նրա բնակչութեանը բնորոշ առանձնայատկութիւններից, արհեստագործական զբաղմունքից: Ընդ որում, հնարաւոր էր, որ տեղի հայկական անուանումը նոյնպէս կապուած լինէր բնակավայրի առանձնայատկութիւնների հետ, բայց չհամընկնէր օտարների կողմից նրա ընկալման ձեւի հետ:

Տեղանունների այս խմբի մէջ է Քուրքէջ (قورقچ)–Գէօռքէջ (گورقچ) անուանումը, որ պարսկերէն վաւերագրերում գործ է ածում Այրիվանք–Գեղարդի վանքի համար¹¹⁷: Ալիշանը նշում է անուան «Կէօրկէջ» տարբերակը¹¹⁸: Սա թիրքախօս հարեւանների կողմից վանքին տրուած անուանումն է, որի մէջ իրեն է կցուել հաւանաբար թիրքերէն հնչողութեամբ պարսկերէն «գերեզման» (گور-قور) եւ

հայերէն «խաչ» բառի օտարահունչ «քաչ-քէջ» տարբերակը՝ նկատի ունենալով այնտեղ գտնուող Պռոշ իշխանի ու նրա տոհմի գերեզմանատունն ու Գեղարդի Վանքում պահուող Ս. Ամենափրկիչ խաչը կամ գեղարդը¹¹⁹:

Այսպէս, Գեղարքունիքի Գաւառը յիշատակում է «Գէօքչա-كوكچه» անուամբ¹²⁰, որը թիւրքերէնից թարգմանաբար նշանակում է «երկնագոյն, կապոյտ» եւ հանդիսանում Սեւանայ Լճի օտար գունանուներ: Իհարկէ, երբ նկատի է առնում հենց լիճը, Գէօքչա անուան հետ միաժամանակ նշում է նաեւ «ծով, թիւրք. դենիզ-دنگيز» բաղադրիչը:

Տեղանքի առանձնայատկութիւններով պայմանաւորուած է նաեւ Ղըրխբուլաղ (քառասուն աղբիւր, թիւրք. قرحبلاغ) տեղանունը որպէս Կոտայքի շրջանի անուանում ինչպէս պարսկերէն վաւերագրերում¹²¹, այնպէս էլ յետագայում ռուսական իշխանութիւնների կողմից կազմած վիճակագրական ուսումնասիրութիւններում¹²²:

Այս խմբի տեղանունների մէջ կարելի է նշել Հիւսիսային Արցախի Դաշքեսանի շրջանի Հարցհանգիստ բնակավայրը, որի թէ՛ հայկական եւ թէ՛ օտար անուանումները (Չովդառ) կապում են տեղանքի առանձնայատկութիւնների հետ: Հայկական անուանումը՝ Հարցհանգիստ, այսինքն՝ Հարանց (հայրերի) գերեզման, կապում է գիւղի հարաւարեւմտեան կողմի լեռան վրայ եղած գերեզմանների հետ¹²³: Օտար անուանումը՝ Չովդառ (օսմ. պարսկ. Չովդառ-چودر-هادر, հաճար, ճոն), հայկական անուանման հետ զուգահեռաբար գործածուել է ԺԸ. դարի վերջի գրաւոր աղբիւրներում¹²⁴, ամենայն հաւանականութեամբ կապում է նրա հացառատ վայր լինելու փաստի հետ, որի մասին եւս նշում է Բարխուդարեանցը:

Տեղանքի առանձնայատկութիւնների հետ էր կապուած նաեւ հայկական Կեչան (կամ Կիչան) գիւղի Բալլուդայա (թիւրք. باللوقيه - մեղրոտ լեռ) անուանումը, որը Հայկունին անուանում է Մեղրոտ Ժայռ: Խաչէնի շրջանում նշուող այս հայկական գիւղը ԺԹ. դարում ունէր 15 ծովս բնակիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցի¹²⁵: Բալլուդայա ձեւով այս բնակավայրը պարսկական վաւերագրերում յիշատակում է ԺԸ. դարի առաջին կէսից: Այդ տեղանունը նշում է Խաչէնի Առաջածոր (Դովշանլու) գիւղի աւագերէց Դաւթ մելիքութեանը¹²⁶ համաձայնութիւն տուած հայկական գիւղերի կողմից կազմուած համախօսականում¹²⁷: Ըստ պարսկալեզու Ներսէսովի՝ ԺԸ. դարի կէսին «Խաչէնի մահալում Ուլուքաբի թոռը

ըմբոստանալով՝ փարբեր գիւղերից մարդ է հաւաքում ու ամրանալով Բալլուղայայում, սկսում կռուել Փանահ խանի դէմ»¹²⁸: Այդպէս է նշում գիւղը ԺԹ. դարի առաջին կէսին Ղարաբաղի դատարանում գրուած մի փաստաթղթում, ըստ որի Աղուանից Կաթողիկոսութիւնը կալուածքներ ունէր Բալլուղայա գիւղում¹²⁹:

Տեղանքի առանձնայատկութիւնների հետ է կապւում Առաջաձոր գիւղի հայկական անուանումը: Ըստ Բարխուդարեանցի՝ Առաջաձոր (կամ Առջաձոր, Արջաձոր) գիւղը գտնւում է Արցախի Խաչէն գաւառում, դէպի Արծաթասար ձգուող լեռնաշղթայի հարաւային ստորոտում, անդնդախոր ձորի եզրին¹³⁰: Իսկ գիւղի օտար անուանումը՝ «Դուշանլու կամ Դովշանլու-دوشانلو» հաւանաբար ծագում է արաբերէն «պատուաւոր, պատուարժան, մեծատուն-դուշան-دوشان» արաբերէն բառից եւ նրան կցուած որակը կամ ծագումը ցոյց տուող -لو թիրքական վերջաւորութիւնից: Այդ պարագայում նման անուանումը կապւում է նրա՝ Խաչէնի Հասան-Ջալալեանների իշխանական տոհմին պատկանելու եւ նրա ճիւղի ներկայացուցիչների՝ այնտեղ բնակուելու հանգամանքի հետ, որի մասին նշուել է այդ գիւղին տրուած սկզբնական այլալեզու փաստաթղթերում: Քանի որ իւրաքանչիւր փաստաթուղթ կազմւում էր՝ յենուելով նախկին փաստաթղթերի վրայ, այդ բառը սկսել է ընկալուել որպէս գիւղի անուանում եւ օգտագործուել «Առաջաձոր» անուանը զուգահեռ: Իսկ կէտերի կորուստը (دوشانلو-دوشانلو) եւ համապատասխան հնչիւնափոխութիւնը յաճախակի երեւոյթ էր արաբատառ այբուբէնն օգտագործող լեզուներում:

Առաջաձորը եղել է Խաչէնի Հասան-Ջալալեան տոհմի ժառանգների հայրենական կալուածքներից: Յիշեալ բնակավայրի արեւելքում Անապատ կոչուող կիսաժայռափոր մատուռների առջեւի ժայռաբեկորի վրայ պահպանուել է ԺԳ. դարի մի արձանագրութիւն, որտեղ յիշատակւում են Խաչէնի արքայի Ջալալ Դուլայի եւ նրա որդի Աթաբէկի անունները¹³¹: Իսկ նոյն գիւղի Ս. Աստուածածին եկեղեցում հնում պահւում էին երկու ձեռագիր մատեաններ՝ Աւետարան ու Աստուածաշունչ, որոնք ունէին կարեւոր յիշատակարաններ գիւղի Խաչէնի Հասան-Ջալալեաններին պատկանելու ու նրանց յետնորդների միջեւ տեղի ունեցած վէճի մասին¹³²: Յետագայում եւս Հասան-Ջալալեանների տոհմի մի ճիւղի ներկայացուցիչները բնակւում էին Առաջաձոր Գիւղում՝ վարելով այնտեղի հոգեւոր իշխանութիւնը եւ անգամ երբեմն զբաղեցնելով Աղուանից Կաթողի-

կոսութեան աթոռը, ինչպէս, օրինակ, 1554ին Դաւիթ Առաջաձորեցին¹³³ եւ Եսայի Հասան-Ջալալեանը (1700-1728)¹³⁴: Ըստ Հայկունու՝ ԺԹ. դարում Առաջաձորի բնակիչներից 60ը կրում էին Շահեշանեան ազգանունը: Այդ ազգանունը ծագել է Շահանշահ կամ Շահանշէ անունից: Շահանշահ անունը (թագաւորաց թագաւոր, արքայից արքայ), լայնօրէն տարածուած էր Հասան-Ջալալեան տոհմի ներկայացուցիչների շրջանում¹³⁵:

ԱՐՇԵՍՏՆԵՐԻ ՈՒ ԳԻՒՂԵՐԻ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՈՒՈՂ ՕՏԱՐ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐ

Հետաքրքրական են հայկական տեղանուններին զուգահեռ օգտագործուող այն օտար անունները, որոնք մատնանշում են արիեստներ եւ որ տուեալ վայրում զբաղուել են տուեալ արիեստով: Այդ կարգի տեղանունները հիմնականում վերջանում են թիրքական «-չի» վերջածանցով, եւ զարմանալի չէ, որ դրանք յաճախ կրկնուում են նաեւ հարեւան շրջաններում:

Հայկական գիւղերի բնակիչները բացի հողագործութիւնից զբաղում էին նաեւ արիեստներով: Ընդ որում, եթէ թէ՛ հայ, թէ՛ թիրք ու քուրդ կանայք զբաղում էին գորգագործութեամբ ու կարպետագործութեամբ, ապա արիեստաւորներ լինում էին հիմնականում հայ տղամարդիկ: Ուստի այդ օտար տեղանունները եւս մատնանշում են բնակավայրի հայկական լինելը, եթէ ոչ ներկայումս, ապա գոնէ անցեալում: Արցախի ու Զանգեզուրի հայկական գիւղերի բնակիչներն զբաղում էին կաւագործութեամբ (բրուտներ), քարտաշութեամբ, դարբնագործութեամբ, արծաթագործութեամբ, կօշկակարութեամբ եւ այլ արիեստներով¹³⁶:

Օտար տեղանունների այս խումբը, ամենայն հաւանականութեամբ տեղի բնակչութեան բնորոշման հարցում շատ անելի մեծ կարելորդութիւն ունենալով Արեւելեան Հայաստանի հայ եւ օտարազգի բնակիչների շրջանում, յաճախ գործածութիւնից գրեթէ լիովին դուրս է մղել բնակավայրի հին հայկական տարբերակը: Այսպիսին է իրավիճակը Արցախում եւ Սիւնիքում եղած միքանի «Ղազանչիների» (օսմ. կաթսայագործ-قزغانچی-قزآنچی, قزانچی) դէպքում: Ղազանչի է կոչուել Հիւսիսային Արցախի Կասում-Իսմայլովի շրջանի բնակավայրերից մէկը, որ ԺԹ. դարի վերջին պատկանել է ոսկանապատցի կալուածատէրեր Նազար Մելիք-Շահնազարեանին եւ Լազար Էմմանուէլեան Լազարեանցին¹³⁷:

Նոյն անուանմամբ մէկ այլ հայկական բնակավայր էլ կայ Հիւսիսային Արցախի Գետաբեկի շրջանում: Մինչեւ 1770ականները հայաբնակ այդ բնակավայրի անուան հայկական տարբերակը եւս մոռացուել է¹³⁸: Յայտնի է Ղազանչի-Շահկերտ բնակավայրը¹³⁹ նաեւ Սիսականի Երնջակ Գաւառում, որի բնակիչները յայտնի էին որպէս պղնձագործներ (կամ կաթսայագործներ)¹⁴⁰: Այստեղից գաղթած բնակիչների մի առանձին թաղամաս է եղել Շուշի քաղաքում, որոնք նոյնպէս հմուտ կաթսայագործներ էին¹⁴¹: Ղազանչի անունով բնակավայրերից մէկը, ըստ Բարխուդարեանցի գտնում է Ջրաբերդ Գաւառում, Կիչանի արեւելահիւսիսային կողմում, Խաչէն եւ Ջրաբերդ գաւառների սահմանագլխի սարի հիւսիսային կողմում¹⁴²: Ղազանչի անուամբ մեծ թուով բնակավայրեր կան ոչ միայն Արցախում, այլեւ Երեւանի Նահանգի Ալեքսանդրապոլ, Սուրմալու գաւառներում¹⁴³:

Արցախի Ջրաբերդ Գաւառում նշուող Ղազանչի հայկական բնակավայրի պատմութեանը վերաբերող տուեալներ պահպանուել են ինչպէս տեղի արձանագրութիւններում, այնպէս էլ Մատենադարանի ԺԷ. դարի պարսկերէն վաւերագրերում¹⁴⁴:

Երեւանի Նահանգի Նորք Գիւղի հայերէն անուան հետ պարսկերէն վաւերագրերում յաճախ օգտագործում է Չոմլաք-Չոլմաքչի (կամ Չոմլաքչի-چلمکچی) թիրքերէն անուանումը, որը նշանակում է «բրուտ, կաւագործ, խեցեգործ» եւ յուշում այդ բնակավայրի բնակչութեան արհեստագործական զբաղուածութեան մասին¹⁴⁵:

Վարանդայի Աւետարանոց Գիւղի Չանախչի օտար անուանումը հաւաստում է, որ այդ գիւղում զբաղւում էին կաւագործութեամբ, քանզի «չանաղչի-چنقالچی، چنقالچی» օսմաներէն նշանակում է «հողէ պնակներ, անօթներ պատրաստող»: Չանախչի էին կոչւում նաեւ Տանձուտ եւ Համասրաբակ բնակավայրերը Հիւսիսային Արցախում¹⁴⁶: Նոյն անուանմամբ մի շարք բնակավայրեր են եղել թէ՛ Արեւմտեան ու Արեւելեան Հայաստանի տարբեր շրջաններում¹⁴⁷ եւ թէ՛ Իրանի Ատրպատական Նահանգում¹⁴⁸:

Տեղանունների այս խմբի մէջ կարելի է դիտարկել նաեւ «Ղուշչի-قوشچی» անուամբ յայտնի միքանի տեղանուններ, որ յիշատակւում են պատմական Հայաստանի տարբեր շրջաններում: Հայաստանի ու Վրաստանի լեռնային շրջանները Արեւելքում յայտնի էին որսի թռչունների եւ նրանց տեսակների առատութեամբ¹⁴⁹: Սէֆեան վարչական համակարգում կային

«ղուշի» կոչուող պաշտօնեաներ¹⁵⁰։ Ըստ երեւոյթին, բազէների մատակարարումը պալատին ապահովում էին առանձին բնակավայրեր, որոնք բացի հողի մշակութիւնից, զբաղւում էին բազէների բուծանմամբ ու բազմացմամբ, իսկ բազէներ որպէս ընծայ շահի արքունիքին մատակարարում էին սահմանային շրջանների հաքիմներն ու ամիրները¹⁵¹։ Ղուշի անուամբ բնակավայրերից մէկը նշւում է Քաշաթաղի շրջանում, Մերիկ գիւղից 2կմ հարաւ-արեւելք, Աղաւնագետի աջ կողմում, որի մօտակայքում պահպանուել է «Մկնատամի Խաչ» կոչուած ԺԲ.-ԺԳ. դարերի եկեղեցին¹⁵²։ Նրա գեղջաւագները 1691ին իրենց համաձայնութիւնն են տալիս Քաշաթաղի Մելիք Հախնազարի որդու՝ Իլիասի ընտրութեանը որպէս իրենց վիագոր ներկայացուցիչ¹⁵³։ Նոյնանուն բնակավայր գտնուել է նաեւ Սինիքում, որը յիշատակւում է Ստեփանոս Օրբէլեանի *Ժամանակագրութեան* Տաթեւի թեմի հարկացուցակում¹⁵⁴։ Ղուշի անուամբ մէկ այլ բնակավայր է նշւում Գանձակի Գաւառում, որի հայկական անուանումը Խաչակապ կամ Խաչափակ է¹⁵⁵, իսկ նրա Ղուշի անուանումը կապւում է շահ Աբբաս Ա.ի ժամանակներին վերաբերող մի աւանդութեան։ Ըստ այդ աւանդութեան՝ շահ Աբբասի արշաւանքների ժամանակ Գրիգոր անունով մէկը ցանկանում է բազէ բռնել շահին ընծայելու համար, բայց ժայռից ընկնում ու մահանում է։ Շահ Աբբասն էլ գիւղը նուիրում է տեղի համայնքին եւ այն անուանում Ղուշի¹⁵⁶։

Ռուսական տիրապետութեան շրջանում Զանգեզուրի շրջանում նշւում է երկու տեղանուն, որի հիմքում Ղուշի բառն է. մէկը Ղուշիլուն է, որն ունէր թիրքալեզու բնակչութիւն, եւ միւսը՝ հայաբնակ Ղուշի Թազաքենդը՝ իր 74 ծուխ հայ բնակչութեամբ¹⁵⁷։ Ղուշի անուամբ բնակավայր է նշւում նաեւ Այրարատ Նահանգի Նիգ (Ապարան) Գաւառում, որն ըստ Ալիշանի ունէր Աստուածածին եկեղեցի¹⁵⁸ եւ ԺԹ. դարի սկզբի տուեալներով 72 շունչ հայ բնակչութիւն¹⁵⁹։ Այս անուամբ բնակավայրեր կան նաեւ ներկայիս Իրանի տարածքում, որոնցից միքանիսը նշւում են Ատրպատականում¹⁶⁰։

Թէեւ առայժմ փաստեր չունենք Ղուշի անուան ծագումը որսի թռչունների (բազէների) բուծանման հետ կապելու, սակայն բաւարար հիմք էլ չունենք դա հերքելու, որովհետեւ որսորդութեամբ զբաղուելը Իրանի շահերի ու ազնուականութեան սիրելի զբաղմունքներից էր, եւ իրանական պետութեան համար կարեւոր էր որ-

սի թռչունների բուծանումը: Կային անգամ ուղեցոյցներ (Գիրք բազէների մասին -Բազ-նամէ -بازنامه), որոնցում տրուում էին նրանց բուծանման ու բազմացման, նաեւ բուժման եղանակները¹⁶¹:

Ղուշջի բառի բովանդակային նշանակութեան հետ են կապուում Հիւսիսային Արցախի Ոսկանապատ Գիւղի Սկնապատ-Սոնդորաբադ տարբերակները: Հայկական բարբառներում այն յիշատակուում է Սկնապատ ձեւով¹⁶², իսկ պարսկական աղբիւրներում՝ «Սոնդորաբադ-سنقراباد» ձեւով: «Սոնդորաբադ» տեղանունը պարսկական վաւերագրերում յիշատակուում է Ժէ. դարի սկզբից: Մասնաւորապէս՝ շահ Աբբաս Ա.ի 1607ի հրամանագրով քրիստոնեայ Մելիք Նազարը նշանակուում է Ղարաբաղի Սոնդորաբադի մելիք եւ առաջնորդ¹⁶³: Մելիք Սարուխանը եւ նրա եղբայր Նազարն այն հայ մելիքներից էին, որոնց շահ Աբբաս Ա.ն իր հետ տանում է Սպահան¹⁶⁴:

1637ին շահ Սեֆի Ա.ի հրովարտակով նախկինում Մելիք Նազարին ու Մելիք Սարուխանին շնորհուած Սոնդորաբադ ու Ղարաքեշիշ (Բրաջուր) գիւղերի համեսալէն¹⁶⁵ շնորհուում է «Սաֆար Ղուլին եւ այլ ղուշջի ղուլամներին (բազէապան ծառաներին)»¹⁶⁶: «Սոնդոր-سنقر، سنقر» բառը պարսկերէն նշանակուում է «որսորդական բազէի տեսակ», իսկ «աբադը-آباد» նոյն «շէն, բնակավայր» ցոյց տուող բաղադրիչն է, որը յաճախակի է հանդիպուում թէ՛ հայկական եւ թէ՛ իրանական տեղանուններում: «Սոնդորաբադ» անուան թարգմանութիւնը եւ այն, որ նրա հարկերից բաժին է յատկացուում արքունի բազէապաններին, յուշուում են, որ այդ բնակավայրում, հաւանաբար, զբաղուում էին բազէների կամ որսի այլ թռչունների բուծանմամբ: Այստեղից էլ, ամենայն հաւանականութեամբ, ծագուում է հայկական անուանումը, որը սկզբնապէս պէտք է որ եղած լինի Որսկանապատ՝ կապուելով այնտեղ բազէների կամ որսականների¹⁶⁷ բուծանման հետ եւ ոչ Ոսկանապատ, որտեղ «որսկանը» պէտք է հասկանալ «որսի թռչուն» իմաստով: Ի դէպ, նոյն կերպ է ստուգաբանուում նաեւ Իրանի Քերմանշահի շրջանում գտնուող «Սոնդոր-سنقر» տեղանունը¹⁶⁸:

Յետագայում եւս, օրինակ 1794ին Սարգիս կաթողիկոսի ընտրութեան կապակցութեամբ կազմուած պարսկերէն համախօսական գրութեան մէջ նշուում է Սոնդորաբադի Մելիք Եուսուֆի անունը¹⁶⁹, որը յուշուում է, որ այդ շրջանում եւս գիւղը հայաբնակ էր եւ ունէր իր մելիքը: Ընդ որում, ըստ ազգագրագէտ

Լալայեանի, Ոսկանապատը, ինչպէս նաեւ Միրզիկ, Մուռութ եւ Բրաջուր գիւղերը պատկանում էին Մելիք Շահնազարեաններին, որոնցից Մելիք Եւսուֆ Գ.ը մահացել էր 1826ին¹⁷⁰:

Շատ հազուադէպ սակայն միքանի հայաբնակ վայրերի անունները պարսկերէն վաւերագրերում նշում են միքանի տարբերակներով՝ հիմնականում շփոթութիւնից խուսափելու նպատակով: Դա օգնում է ամելի հեշտ կողմնորոշուել այդ բնակավայրի տեղադրութեան հարցում ու նրան վերաբերող պատմական տեղեկութիւններ քաղելիս ամելի վստահ օգտուել հայ եւ օտար աղբիւրներից: Երկու անուններով են հանդէս գալիս Թեղենիս-Քիրաշլու եւ Նորք-Չոլմաքչի (Չոմլաքչի) բնակավայրերը: Թեղենիս գիւղը Թեղենիք ձեւով յիշատակում է Կիրակոս Գանձակեցու *Պատմութեան մէջ*¹⁷¹: Երկու անուամբ են այդ գիւղերը նշում մասնաւորապէս Էջմիածնի կալուածքների գնմանը վերաբերող 1431ի կալուածագրում¹⁷²: Յետագայի՝ ԺԷ.-ԺԹ. դարերի վաւերագրերում պահպանուել են միայն «Քիրաշլու-Քիրաշլու» տարբերակները¹⁷³: ԺԷ. դարի պարսկերէն վաւերագրերի տուեալների հիման վրայ ճշգրտում է այն, որ Սինիքի Դարաբաս գիւղը հայոց Աղվերձ բնակավայրի օտար տարբերակն է, ինչպէս պնդում է Նոր Դար պարբերականում (թիւ Է, 180) տպագրուած ուղեգրութեան հեղինակը եւ որը փորձում է հերքել Ալիշանը, թէեւ նշում է երկու գիւղերում եւս Ս. Ստեփաննոս եկեղեցիների գոյութեան մասին¹⁷⁴:

Երեք՝ Քեշիշքենդ, Այդինդարվիշ եւ Չելեքի[քենդ] անուններով է հանդէս գալիս Էջմիածնի կալուածքներից հանդիսացող գիւղը, որն ըստ հետազօտողների գտնուել է Արայի Լեռան արեւելեան ստորոտին, ժամանակակից Սարալանջ բնակավայրի մօտ¹⁷⁵:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեսնում ենք, բազմաբնոյթ են Արեւելեան Հայաստանի օտար տեղանունների ծագման հանգամանքները, որոնք հիմնականում կապուած չէին բնակավայրի էթնիկ կազմում տեղի ունեցած որեւէ փոփոխութեան հետ: Հայկական բնակավայրերի պարսկական վաւերագրերում գրանցուած օտար անուանումները յետագայում տեղ են գտնում Ռուսաստանի տիրապետութեան տակ անցած շրջաններին վերաբերող պաշտօնական գրանցումների մէջ, որոնք կատարուել են հիմնականում մահմեդական բէկերից

ստացուած տեղեկութիւնների հիման վրայ¹⁷⁶: Այդ տեղանունները անլի շատ կապուած են բնակավայրերի ընկերատն-տեսական ու քաղաքական որոշ իրողութիւնների հետ եւ կարելոր նշանակութիւն կարող են ունենալ դրանց ուսումնասիրութեան համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Քրիստինէ Կոստիկեան, *Մատենադարանի Պարսկերէն Հրովարտականները*, Պրակ Գ., Երեւան, «Ձանգակ-97», 2005, վաւ. 15:
- ² Նոյն, վաւ. 16, 19:
- ³ Քրիստինէ Կոստիկեան, *Մատենադարանի Պարսկերէն Հրովարտականները*, Պրակ Դ., Երեւան, Նաիրի հրատ., 2008, վաւ. 9:
- ⁴ Թաթեւոս Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախշեան, Յովհաննէս Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Հտր. 5, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2001, էջ 198:
- ⁵ Յակոբ Փափագեան, *Մատենադարանի Պարսկերէն Կալուածագրերը*, Պրակ Ա., Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, վաւ. 8:
- ⁶ Նոյն, վաւ. 16, Յ. Փափագեան, *Մատենադարանի Պարսկերէն Հրովարտականները*, Պրակ Ա., Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1956, վաւ. 9,:
- ⁷ Կոստիկեան, *Մատենադարանի*, Պրակ Գ., վաւ. 34:
- ⁸ Հայր Ղեւոնդ Ալիշան, *Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի*, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 219, 511:
- ⁹ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ե, վաւ. 782, 836, թղթ. 1ը, վաւ. 1486, 1530, 1684:
- ¹⁰ Կոստիկեան, *Մատենադարանի*, Պրակ Գ., վաւ. 41:
- ¹¹ Ալիշան, *Սիսական*, էջ 352:
- ¹² Այս մասին տե՛ս՝ Հ. Գրիգորիս Ծ. Վրդ. Գալէմքեարեան, *Կենսագրութիւններ Ա.*, Վիեննա, Միսիթարեան տպարան, 1915, էջ 280-3:
- ¹³ Հայր Ղեւոնդ Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, էջ 39, 77, 254, 522:
- ¹⁴ Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի*, Հտր. 1, էջ 205:
- ¹⁵ Մակար Եպս. Բարխուդարեանց, *Աղուանից Երկիր եւ Դրացիք*, Արցախ, Երեւան, Գանձասար Աստուածաբանական կ'ենտրոն, 1999, էջ 226:
- ¹⁶ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2ա, վաւ. 49, թղթ. 2բ, վաւ. 149, 240, 277, 278, 327, 328:
- ¹⁷ Կոստիկեան, *Մատենադարանի*, Պրակ Գ., վաւ. 22:
- ¹⁸ دهخدا، جلد 12، ص. 203
- ¹⁹ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ե, վաւ. 602, 754, 792. թղթ. 242, վաւ. 113. Նաեւ՝ Կոստիկեան, *Մատենադարանի*, Պրակ Գ., վաւ. 60:
- ²⁰ محمد علی مخلصی، فهرست بناهای تاریخی آذربایجان شرقی، تهران، 1371، ص. 193.
- ²¹ Յ. Փափագեան, «Օտար Տիրապետութիւնը Արարատեան Երկրում (ԺԵ. Դար)», *Տեղեկագիր*, 1960, հ. 7-8, էջ 25:

- ²² Առաքել Դարիժեցի, *Գիրք Պարմութեանց*, աշխ.՝ Լ. Ա. Խանլարեան, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1990, էջ 104, 201, 474:
- ²³ Փափազեան, *Մարենադարանի, Պրակ Ա.*, վաւ. 4, էջ 60:
- ²⁴ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, էջ 75, 115, 137, 148, 149, 153:
- ²⁵ «Աղուանք» տեղանուն ծագումը հետազոտող Բաբկէն Յարութինեանը եզրակացնում է, որ նրա հայկական լինելը եւ հայերէնով բացատրուելը կասկածներ չի յարուցում, եւ որ «այն զուտ հայկական երեւոյթ է» (Բ. Յարութինեան, *Հայոց Արեւելից Կողմերի Եւ Աղուանքի Պարմութեան Ու Պարմական Աշխարհագրութեան Հարցեր, Յօդուածների ժողովածու*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2016, էջ 134). նաեւ՝ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, էջ 53, 104, 143, 151:
- ²⁶ Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 156, 237, 245, 254, 286, 287, 333, 374:
- ²⁷ Рашид-ад-Дин, *Сборник Летописей* (Րաշիդ ադ-Դին, Տարեգրութիւնների ժողովածու) *Հոր. III*, Մոսկուա-Լենինկրատ, ԽՍՀՄ ԳԱ Հրատ., 1946, էջ 104:
- ²⁸ Նոյն, էջ 166, 188, Рашид-ад-Дин, *Переписка* (Րաշիդ ադ-Դին, Գրագրութիւն), Մոսկուա, “Նաուկա”, 1971, էջ 231:
- ²⁹ Բագրատ Ուլուքբեան, *Խաչէնի Իշխանութիւնը X-XVI Դարերում*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 40–41:
- ³⁰ جهانگشای خاقان (تاریخ شاه اسماعیل) تالیف در 948، اسلامآباد، مرکز تحقیقات تاریخی ایران و پاکستان، ص. 313، 76.
- ³¹ Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 174:
- ³² فضل الله روزگمان خنجی اصفهانی، تاریخ عالم آرای امینی، تصحیح محمد اکبر عشق، تهران، میراث مکتوب، 1382، ص. 288، 296، 329، 356... شرف الدین علی یزدی، ظفرنامه، جلد 1، 2، تهران، کتابخانه، موزه و مرکز اسناد مجلس شورای اسلامی، 1387، ص. 187، 193، 1121، 1227. نظام الدین شامی، ظفرنامه، جلد 1، بیروت، 1937، ص. 212، 243، 249، 292.
- ³³ Шараф-хан Шамсаддин Бидлиси, *Шараф-наме* (Շարաֆ Խան Շամսադդին Բիդլիսի, Շարաֆ-Նամէ), *Հոր. II*, Մոսկուա, “Նաուկա”, 1976, էջ 101, 111, 113, 193:
- ³⁴ Նոյն, էջ 196:
- ³⁵ Նոյն, էջ 236:
- ³⁶ Նոյն, էջ 246:
- ³⁷ Յ. Փափազեան, *Մարենադարանի Պարսկերէն Հրովարտակաները, Պրակ Բ*, Երեւան, ՀՍՍՀ Հրատ., 1959, էջ 100, 110, 125:
- ³⁸ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 3, 14, 26, 33, 55, 59, 60, 63:
- ³⁹ مختصر مفید، جغرافیای ایران زمین در عصر صفوی، یکوشش ایرج افشار، با همکاری محمد رضا ابوی محمزی، تهران 1390، ص. 168.
- ⁴⁰ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 32, 34
- ⁴¹ Նոյն, վաւ. 41:
- ⁴² Մատենադարան, Կաթող. դիւան, թղթ. 1է, վաւ. 1180
- ⁴³ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, էջ 48, 67, 68, 107, 113, 122:
- ⁴⁴ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Դ.*, վաւ. 9, էջ 36, 228:
- ⁴⁵ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 2, 68:
- ⁴⁶ Նոյն, վաւ. 32:
- ⁴⁷ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Դ.*, վաւ. 9:
- ⁴⁸ Նոյն, վաւ. 19, 22:

- ⁴⁹ Փափազեան, *Մատենադարանի Պարսկերէն, Պրակ Ա.*, վաւ. 27. նաեւ՝ նոյնի, *Մատենադարանի Պարսկերէն Հրովարտականները, Պրակ Ա.*, Երեւան, ՀՍՍՌ. Հրատ., 1956, վաւ. 19. նաեւ՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1գ, վաւ. 328:
- ⁵⁰ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Դ.*, վաւ. 9, էջ 36. նաեւ՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1դ, վաւ. 534, 535, 542:
- ⁵¹ Հ. Թ. Նալբանդեան, *Արաբական Աղբիւրները Հայաստանի Եւ Հարեւան Երկրների Մասին*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1965, էջ 61, 120:
- ⁵² Սինիքի Չանդուր Գաւադի իրանականացուած տարբերակն է, որը ըստ հին ցուցակների Տաթևի թեմի մէջ մտնող գաւառներից էր (Ալիշան, *Միսական*, էջ 242, 272). նաեւ՝ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 49. նաեւ՝ Միրզա Եւսուֆ Ներսէսով, էջ 44, 46; چهل سند فارسی از جمهوری آذربایجان، تیمور مناف اوغلی موسوی، ترجمه: از پرویز زارع شاهمرسی، مرکز اسناد و تاریخ دیپلوماسی، تهران 1386، ص. 121، 122.
- ⁵³ فضل الله روزبهان خنجی اصفهانی، تاریخ عالم آرای امینی، تصحیح محمد اکبر عشق، تهران، میراث مکتوب، 1382، ص. 330
- ⁵⁴ Փափազեան, *Մատենադարանի Պարսկերէն Կալուածագրերը, Պրակ Ա.*, վաւ. 5, էջ 71:
- ⁵⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1է, վաւ. 1372:
- ⁵⁶ Նոյն, թղթ. 1է, վաւ. 1385:
- ⁵⁷ Այդ կերպ այն յիշատակում է դեռեւս *Աշխարհացոյց*ում, որպէս Սինիքի առաջին գաւադի եւ նոյնանուն բերդի անուանում (Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 51):
- ⁵⁸ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ե, վաւ. 782, թղթ. 1է, վաւ. 1219, 1222:
- ⁵⁹ شرف الدين علی يزدي، طفرنامه، جلد 1، 2، تهران، موزه و مرکز اسناد مجلس شورای اسلامی، ص. 575، 770-767، 834، 1001 ...
- ⁶⁰ Կիրակոս Գանձակեցի, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, «Սովետական Գրող», 1982, էջ 258. նաեւ՝ Ստեփանոս Օրբէլեան, *Սինիքի Պատմութիւն*, Երեւան, «Սովետական Գրող», 1986, էջ 316. նաեւ՝ Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից Աշխարհի*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1983, էջ 157, 355:
- ⁶¹ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Դ.*, վաւ. 4, էջ 211. նաեւ՝ Միրզա Եւսուֆ Ներսէսով, *Ճշմարտացի Պատմութիւն*, Երեւան, «Զանգակ 97» Հրատ., 2000, էջ 39, 43:
- امير صدرالدين ابراهيم اميني هروی، فتوحات شاهي، تاريخ صفوی از آغاز تا سال 920ه.ق.، تهران، 1383، ص. 411.
- ⁶² Սլաւա Սարգսեան, *Արցախ. Պատմա-Աշխարհագրական Ճշգրտումներ*, Երեւան, «Հայ Էդիթ», 1996, էջ 79:
- ⁶³ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 119, 125, 362:
- ⁶⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 177, նրա պատճեն տե՛ս՝ վաւ. 376
- ⁶⁵ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 58, էջ 162. նաեւ՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1դ, վաւ. 527
- ⁶⁶ Թովմա Արծրունի Եւ Անանուն, *Պատմութիւն Տանն Արծրունեաց*, քնն. բնագիրը, առաջաբանը եւ ծանօթ.՝ Մ. Հ. Դարբինեան-Մելիքեան, Երեւան, Մատենադարան, «Մագաղաթ», 2006, էջ 119. նաեւ՝ Դարիժեցի, էջ 89, 175, 176, 286 եւն.:

- ⁶⁷ Միքայել Չամչեանց, *Հայոց Պարմութիւն*, Հոր. Գ., Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1984, էջ 837:
- ⁶⁸ Երուանդ Լալայեան, *Նախճաւան Կամ Նախիջեանի Ոսրիկանական Շրջան, Արարարութեամբ Ազգագրական Հանդէսից*, Թիֆլիս, էջ 47:
- ⁶⁹ Ք. Կոստիկեան, «Քաջաթաղի 17-րդ դարի Պատմութեանը Վերաբերող Մի Փաստաթուղթ», *Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Երկրներ Եւ Ժողովուրդներ*, Հոր. XX, Երեւան, «Չանգակ 97», 2001, էջ 169:
- ⁷⁰ Փափագեան, *Մարենադարանի Պարսկերէն Հրովարտակաները*, Պրակ Բ., էջ 89, 100, 124:
- ⁷¹ Սարգիս Զալալեան, *Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան, Մասն Բ*, Տիֆլիս, Տպ. Ներսիսեան Հոգեւոր Հայոց Ճեմարանի, 1858, էջ 361. նաեւ՝ نزهة القلوب، تهران، 1336، ص. 107-106.
- ⁷² Մատենադարան, Մելիք-Շահնազարեանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վաւ. 26. նաեւ՝ Սամուէլ Կարապետեան, *Հայ Մշակոյթի Յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին Բռնակցութեամբ Շրջաններում*, Երեւան, ՀՀ ԳԱ «Գիտութիւն» Հրատ., 1999, էջ 13:
- ⁷³ Ա. Ա. Յակոբեան, Ա. Հ. Սիմոնեան, «Դադի Վանքի Նորայայտ Արձանագրութիւնը Եւ Տպէլի Տեղադրութեան Հարցը», *Պարմաբանասիրական Հանդէս*, Երեւան, 1998, հմ. 1-2, էջ 231:
- ⁷⁴ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 37:
- ⁷⁵ تذكرة الملوك، بكوشش محمد دیرسياقي، تهران 1332، ص. 76.
- ⁷⁶ Կարապետեան, էջ 12:
- ⁷⁷ L. Sahakyan, *Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey*, Montreal, Arod Books, 2010, էջ 29-30:
- ⁷⁸ میرزا یوسف قزلباغی، تاریخ صاقی، بكوشش حسین احمدی، تهران، مؤسسه مطالعات تاریخ معاصر، 1390، ص. 179-181.
- ⁷⁹ 1891 Դեկտեմբերի 27:
- ⁸⁰ Կոստիկեան, *Մարենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 3, էջ 33:
- ⁸¹ Զալալեան, *Մասն Բ.*, էջ 245:
- ⁸² Ուլուքբեան, էջ 308:
- ⁸³ В. И. Абаев, *Этимологические Заметки* (Վ. Աբիեւ, Ստուգաբանական նշումներ), Հոր. VI, Մոսկուա, 1956, էջ 448:
- ⁸⁴ Ներսէսով, էջ 123:
- ⁸⁵ Абаев, էջ 448:
- ⁸⁶ Կարապետեան, էջ 73:
- ⁸⁷ Կաղանկատուացի, էջ 321, 322. նաեւ՝ Գանձակեցի, էջ 64:
- ⁸⁸ *Յուզակ Ձեռագրաց*, Հոր. Ա., կազմեցին Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաթեան, Հոր. Ա, Բ, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1965, ձեռ. 3647:
- ⁸⁹ Սիմէոն Կաթողիկոս Երեւանցի, *Ջամբը*, Երեւան, Մուղնի Հրատ., 2003, էջ 396:
- ⁹⁰ Описание Карабагской Провинции, Составленное в 1823 Году по Распоряжению Главноуправляющего в Грузии Ермоловым, Действительным Статским Советником Могилевским и Полковником Ермоловым 2-м (Ղարաբաղի Մարզի նկարագրութիւն, կարգադրութեամբ Վրաստանի մէջ գործող զխաւոր կառավարիչ Երմոլովի պետական խորհրդական Մոկիլեւսկիի եւ գնդապետ Երմոլով 2րդի), Թիֆլիս, 1866, էջ 42, 91, 107, 215, 222:

- ⁹¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ա, վաւ. 48, թղթ. 1բ, վաւ. 103, թղթ. 1ե, վաւ. 678, թղթ. 4, վաւ. 112 եւն.:
- ⁹² Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ա, վաւ. 50, 54, 69, 71 եւն.:
- ⁹³ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1բ, վաւ. 158
- ⁹⁴ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Գ.*, էջ 66, 68, 107, 113, 122:
- ⁹⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 138, 140, 165, 178 եւն.:
- ⁹⁶ Ս. Կարապետեան, *Հիսիսային Արցախ*, Երեւան, ՀՀ ԳԱ «Գիտութիւն» Հրատ., 2004, էջ 35:
- ⁹⁷ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 241ա:
- ⁹⁸ С. Лисициан, *Армяне Нагорного Карабаха* (Ս. Լիսիցեան, Լեռնային Ղարաբաղի հայերը), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1992, էջ 25:
- ⁹⁹ Կարապետեան, *Հիսիսային Արցախ*, էջ 321:
- ¹⁰⁰ Joseph Emin, *Life and Adventures of Joseph Emin*, Calcutta, published by the Baptist Mission Press, 1918, էջ 306:
- ¹⁰¹ Բ. Կոստիկեան, «Ղարաբաղի Հայ Մելիքները Նադիր Շահի Իշխանութեան Տարիներին», *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ Ժողովուրդներ*, Հտր. XXVI, Երեւան, Ասողկ, 2007, էջ 260:
- ¹⁰² Հայր Ղեւոնդ Ալիշան, *Արցախ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2003, էջ 80:
- ¹⁰³ Лисицян, էջ 69:
- ¹⁰⁴ Բարխուդարեանց, էջ 118:
- ¹⁰⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2ա, 92, թղթ. 2բ, վաւ. 124ա, թ. 286:
- ¹⁰⁶ Sahakyan, էջ 28:
- ¹⁰⁷ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1գ, վաւ. 955, թղթ. 1ե, վաւ. 1076:
- ¹⁰⁸ Դարժեցի, էջ 87, 104: Ըստ Ալիշանի դա նախկին Վարաժնունիք աշխարհն է (Ալիշան, *Այրարապ*, էջ 277)
- ¹⁰⁹ Բարխուդարեանց, էջ 220-1:
- ¹¹⁰ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 3, 55:
- ¹¹¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, 1ա, վաւ. 29, թղթ. 1բ, վաւ. 154, 1դ, վաւ. 545, թղթ. 1ե, վաւ. 688, թղթ. 1ե, վաւ. 1108, 1171 եւն.:
- ¹¹² Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2ա, վաւ. 90, թղթ. 2բ, վաւ. 137ա, թ. 128:
- ¹¹³ Նոյն, թղթ. 2բ, վաւ. 137ա, 140, 148, 152:
- ¹¹⁴ Բարխուդարեանց, էջ 204:
- ¹¹⁵ Ա. Յակոբեան, *Պատմա-Աշխարհագրական եւ Վիճագրական Հետազոտութիւններ (Արցախ եւ Ուրիք)*, Վիեննա-Երեւան, Միխրաբեան Հրատ. 2009, էջ 318:
- ¹¹⁶ Զալալեան, *Մասն Բ*, էջ 262. նաեւ՝ Բարխուդարեանց, էջ 204:
- ¹¹⁷ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1գ, վաւ. 372, 382, թղթ. 1ե, վաւ. 1380ա:
- ¹¹⁸ Ալիշան, *Այրարապ*, էջ 347:

- ¹¹⁹ Նոյն, էջ 339-340
- ¹²⁰ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Գ.*, էջ 115, 137, 158. նաեւ՝ Կաթողիկոսական դիւան, թղթ. 1բ, վաւ. 161, թղթ. 1է, վաւ. 1076, թղթ. 1ը, վաւ. 1585ա եւն.:
- ¹²¹ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Դ.*, վաւ. 8:
- ¹²² И. Шопен, Исторический Памятник Состояния Армянской Области в Эпоху ея Присоединения к Российской – Империи (Ի. Շոպէն, Պատմական յուշարձան Հայկական Մարզի կազմութեան մասին՝ այն Ռուսական Կայսրութեանը միացնելու ժամանակաշրջանում), Սանկտ Պետերբուրգ, ԳԱ Հրատ., 1852, էջ 509-510:
- ¹²³ Բարխուդարեանց, էջ 309:
- ¹²⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 241ա:
- ¹²⁵ Բարխուդարեանց, էջ 247:
- ¹²⁶ Նրա մասին տե՛ս՝ Կոստիկեան, «Ղարաբաղի Հայ Մելիքները», էջ 259:
- ¹²⁷ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 376: Այն հրատարակուած տե՛ս՝ Կոստիկեան, «Ղարաբաղի Հայ Մելիքները», էջ 261:
- ¹²⁸ Ներսէսով, էջ 50:
- ¹²⁹ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 286:
- ¹³⁰ Բարխուդարեանց, էջ 257:
- ¹³¹ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 88:
- ¹³² Բարխուդարեանց, էջ 257:
- ¹³³ Լեոնիկ Մկրտումեան, *Աղուանից (Գանձասարի) Կաթողիկոսութիւնը XVII-XIX դդ.*, Երեւան, Տնտեսագէտ, 2006, էջ 219:
- ¹³⁴ Ուլուքաբեան, էջ 377:
- ¹³⁵ Հրաչյեայ Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան*, Հտր. Դ., Երեւան, ԵՊՀ Հրատ., 1948, էջ 111-112:
- ¹³⁶ *Материалы для Изучения Экономического Быта Государственных Крестьян Закавказского Края* (Նիւթեր Անդրկովկասի վարչատնտեսական համակարգի, գիւղացիութեան վիճակն ուսումնասիրելու համար), Հտր. IV, Պրակ I., Թիֆլիս, Տպ. Մելիքովի, 1886, էջ 103, 117:
- ¹³⁷ Կարապետեան, *Հիսիսային Արցախ*, էջ 427:
- ¹³⁸ Նոյն, էջ 66:
- ¹³⁹ Շահկերտ ձեւով տե՛ս՝ Դարիժեցի, էջ 286:
- ¹⁴⁰ Ալիշան, *Սիսական*, էջ 362:
- ¹⁴¹ Лисицян, էջ 70:
- ¹⁴² Բարխուդարեանց, էջ 271:
- ¹⁴³ Թաթեւոս Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախշեան, Յովհաննէս Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Հտր. III, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1991, էջ 497-498:
- ¹⁴⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2, վաւ. 49, 2բ, վաւ. 190. նաեւ՝ Կոստիկեան, *Մատենադարանի, Պրակ Գ.*, վաւ. 3:
- ¹⁴⁵ Փափազեան, *Մատենադարանի Պարսկերէն Հրովարտակաները, Պրակ Բ.*, վաւ. 34, 38. նաեւ՝ ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1գ, վաւ. 382
- ¹⁴⁶ Կարապետեան, *Հիսիսային Արցախ*, էջ 80, 256:

- ¹⁴⁷ Թաթեոս Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախշեան, Յովհաննէս Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Հոր. IV, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1998, 210-211:
- ¹⁴⁸ دهخدا، لغت نامه، جلد 9، ص. 321
- ¹⁴⁹ *A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675*, translated from the Latin and annotated by Collette Ouahes and Willem Floor, Washington, Mage publishers, 2014, pp. 298-299.
- ¹⁵⁰ Ղուշինների մասին բազմիցս յիշատակում է Սէֆեան պետութեան վարչա-քաղաքական կառուցուածքին վերաբերող *Դասթուր ալ-մուրուք* աշխատութեան մէջ. 57-55. ص. 1385. تهران، ترجمه علی کردابادی، 1385.
- ¹⁵¹ القاب و مواجب دورة سلاطين صفوی، به تصحيح يوسف رحيم لو، مشهد، 1371، ص. 69.
- ¹⁵² Կարապետեան, *Հիսիսային Արցախ*, էջ 138:
- ¹⁵³ Կոստիկեան, *Քաշաթաղի 17-րդ Դարի*, էջ 170:
- ¹⁵⁴ *Ժամանակագրութիւն Սրբեփաննոսի Օրբէլեանի*, Երեւան, Մատենադարան, 1942, էջ 42:
- ¹⁵⁵ Լալայեան, *Գանձակի Գաւառ*, էջ 296:
- ¹⁵⁶ Նոյն, էջ 297:
- ¹⁵⁷ *Материалы для Изучения*, т. IV, ч. I, էջ 158:
- ¹⁵⁸ Ալիշան, *Արարար*, էջ 254:
- ¹⁵⁹ Шопен, էջ 587:
- ¹⁶⁰ فرهنگ جغرافیایی ایران، جلد 4، استان 3 و 4 آذربایجان، تهران، چاپخانه ارتش، 1330، ص. 397.
- ¹⁶¹ Բազէների բուծման ու խնամքին նուիրուած աշխատութիւններից մէկի ձեռագիր օրինակ կայ նաեւ Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդում եւ գրանցուած է որպէս ձեռ. հ. 183:
- ¹⁶² Զալալեան, *Մասն Ա.*, էջ 22:
- ¹⁶³ *Тбилисская Коллекция Персидских фирманов* (Թբիլիսիի պարսկերէն հրովարտականքը), Հոր. I, Քութայիսի, 1995, էջ 20:
- ¹⁶⁴ Դարիժեցի, էջ 63:
- ¹⁶⁵ Համեսալէ (حمة سالة). այսպէս էր անուանում ռոճիկների հատուցման այն ձեւը, ըստ որի ռոճիկ ստացող պաշտօնեան իրաւունք էր ստանում, ցնոր տնօրինութիւն, ամէն տարի նոյն վայրի հարկերի հաշուից ստանալու իր ռոճիկի գումարը: Այսպիսի իրաւունք ստացող զինուորականներն ու պետական պաշտօնեաները կոչւում էին «համեսալեղար» (Փափագյան, Պրակ Բ, էջ 221):
- ¹⁶⁶ *Тбилисская*, էջ 37:
- ¹⁶⁷ «Որսական» բառն ունեցել է «որսի թոչուն», «բազէ» իմաստը (Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, *Նոր Բաղիրք Հայկազեան Լեզուի*, Հոր. Բ, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1981, էջ 538):
- ¹⁶⁸ ایرج افشار سیستانی، پژوهش در نام شهرهای ایران، تهران، 1378، ص. 410.
- ¹⁶⁹ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 241ա:
- ¹⁷⁰ Լալայեան, *Գանձակի Գաւառ*, Հոր. Ա, էջ 58:
- ¹⁷¹ Գանձակեցի, էջ 128:

¹⁷² Փափագեան, *Մատենադարանի Պարսկերէն Կալուածագրերը*, Պրակ Ա., վաւ. 5, էջ 72:

¹⁷³ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1բ, վաւ. 209, թղթ. 1դ, վաւ. 464, թղթ. 1է, վաւ. 1096, 1180:

¹⁷⁴ Ալիշան, *Սիսական*, էջ 221:

¹⁷⁵ Երեւանցի, *Ջամբռ*, էջ 488:

¹⁷⁶ Պ. Ա. Չոբանեան, Ա. Ս. Վիրաբեան, «Արցախի 1832-1833 Մարդահամարի Տուեալները», *Աշխարհաբային Տեղրեր, Հայկական Բանակ Ռազմագիտական Հանդէսի Յանդուած* 3-4 (31-32), 2014, էջ 88-89:

THE TRANSFORMATION OF ARMENIAN MONASTERY AND SETTLEMENT
TOPONYMS IN PERSIAN DOCUMENTS
(Summary)

KRISTINE KOSTIKYAN
kkostikyan@yahoo.com

Armenian monasteries and settlements are named in Persian documents in ways different from those registered in Armenian sources and are closer in pronunciation to Muslim names. This fact has enabled many Azeri falsifiers to claim the ethnic 'Azeriness' of Armenian villages and regions, and to politicise their claims rather than sticking to scientific research and intentions. These falsifications have gone to the extent of claiming Turkish origin for not only Armenian villages but also whole regions and provinces including Yerevan, Nakhichevan and Karabagh.

The paper analyses the transformation of these toponyms in Persian, Turkish and Russian sources as a reflection of the development of the relations between the Armenian population of the South Caucasus and their nomadic neighbours.

The author underlines the main features of these transformations and proves that the changed toponyms had nothing to do with the ethnic composition of these villages and regions. The paper notes that these names were more acceptable for the Turkish nomadic tribes, who since the 12th Century had made certain Armenian regions their preferred winter and or summer grazing lands. The paper notes that these nomadic tribes constituted the backbone and the military forces of the ruling powers, like the Qara Qoyunlus, Aq Qoyunlus, Safavids, Afsharids and Qajars.

The article analyses the modes of corruption of these toponyms, for example:

- a. Derived from Armenian original names but underwent certain changes to fit the phonetical system of the Persian and Turkish languages.
- b. The result of misreadings and attempts to give suitable meanings and explanations in Persian or Turkish.
- c. Direct translations from Armenian, sometimes with the addition of the Persian verbal noun "kent" (meaning built by).
- d. The result of historical facts, which the region was identified with, like the name *Chukhur Sa'ad* given to the Yerevan region in the 15th Century, and *Karabagh*.
- e. Denoting certain handicrafts (*Qazanchi* - pot-maker in Turkish, *Chanakhchi* - bowl maker in Turkish, *Chomlakchi* - ceramist in Turkish) which male adults were occupied with alongside agriculture.